



Արթուր Ռոբերտի ՊՈՂՈՍՅԱՆ  
ՀՀ վարչական դատարանի դատավոր,  
Ռուս-Հայկական (Մլավոնական) պետական համալսարանի դասախոս,  
իրավաբանական գիտությունների թեկնածու

## ՀՀ դատական համակարգի գործունեության հետագա բարելավման գրավականներ

ՀՀ դատական համակարգի կամ իշխանության մասին խոսելիս, առաջին հերթին, անհրաժեշտ է անդրադառնալ ՀՀ դատական օրենսգրքի 2-րդ մասում ամրագրված դատական դպրոցին և նույն օրենսգրքի 15-16-րդ գլուխներում տեղ գտած դատավորների նշանակմանը վերաբերող որոշ հիմնահարցերին:

1. Այսպես, ՀՀ դատական օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ եթե ընթացիկ տարվա սեպտեմբերի 1-ի դրությամբ Դատական դպրոցն ավարտած և Դատական դպրոցում սովորող անձանց ընդհանուր թիվը չի գերազանցում 12-ը, ապա վճռաբեկ դատարանի նախագահը ոչ ուշ, քան մինչև սեպտեմբերի 10-ը հրապարակում է հայտարարություն՝ դատավորների թեկնածությունների ցուցակի լրացման նպատակով որակավորման ստուգումներ անցկացնելու մասին:

Ըստ նույն օրենսգրքի 187-րդ հոդվածի՝ ուսուցումը Դատական դպրոցում ավարտվում է փորձաշրջանով: Դատական դպրոցում ուսուցումը սկսվում է սույն օրենսգրքի 117-րդ հոդվածին համապատասխան որակավորման ստուգման արդյունքների ամփոփումից հետո՝ հունվար ամսին, և ավարտվում է նույն տարվա հուլիսի 31-ից ոչ ուշ:

*Մեր կարծիքով, ՀՀ դատական դպրոցում ուսուցման մոտ վեցամսյա ժամկետն ենթակա է վերանայման* այն հաշվով, որ ունկնդիրները հնարավորություն ստանան մինչև դպրոցն ավարտելը *պարտադիր կերպով*, բացի տեսական գիտելիքներ ստանալուց և քննություններ հանձնելուց, որոշակի ժամանակահատված աշխատել տարբեր ատյանի դատարաններում՝ դատավորի /թեկուզև երկրորդ/ օգնականի պաշտոնում: Մինչդեռ, ՀՀ դատական օրենսգրքի 183-րդ հոդվածի 2-րդ մասը նախատեսում է միայն դատական դպրոցն ավարտածների իրավունքն իրենց նախաձեռնությամբ աշխատելու որպես դատավորի օգնական՝ Դատական դեպարտամենտի կենտրոնական մարմնում աշխատանքի ներգրավվելու փոխարեն:

Դատական տվյալ պրակտիկայի համար անհրաժեշտ է մշակել նաև հստակ ծրագիր, որի բարեհաջող ավարտից հետո նոր ունկնդիրը կավարտի իր ուսումը: Ի դեպ, դատավորների թեկնածությունների ցուցակի լրացման նպատակով անցկացվող որակավորման ստուգումը, որը կատարվում է մրցութային կարգով, *պետք է պայմանավորված լինի բացառապես տարեկան կտրվածքով դատավորների թափուր տեղեր առաջանալու գործոնով /օրինակ՝ 65 տարին լրանալու կամ հիվանդության կապակցությամբ պաշտոնավարման ավարտով/*, որպեսզի ՀՀ-ում դատական դպրոցի շրջանավարտների «ավելցուկ» չարձանագրվի և նրանք տարիներ շարունակ անհարկի չսպասեն դատավորի թափուր տեղ առաջանալուն, ինչն անխուսափելիորեն հանգեցնում է դատական դպրոցում ուսման ընթացքում ստացված գիտելիքների

որոշակի մոռացությանը և ապարդիականացմանը: Իր հերթին, ՀՀ դատական դպրոցն ավարտած և համապատասխան հավաստագիր ստացած անձինք պետք է, օրինակ, երկու տարվա ընթացքում պարտադիր ներկայացվեն ՀՀ արդարադատության խորհրդի քննարկմանը և Հանրապետության Նախագահին պարտադիր առաջարկմանը /ՀՀ արդարադատության խորհուրդը պետք է միայն բացառիկ դեպքերում իրավագոր լինի շրջանավարտին չառաջարկել ՀՀ Նախագահին՝ դատավորի պաշտոնի թափուր տեղում նշանակելու համար/:

Բացի այդ, ՀՀ դատական օրենսգրքի դատավորների նշանակմանը վերաբերող նորմերը /15-16-րդ գլուխներ/ անհրաժեշտ է պարզեցնել և ՀՀ արդարադատության խորհրդին տրամադրել ավելի լայն լիազորություններ դատավորների թեկնածությունների ու ծառայողական առաջխաղացման ոլորտներում: Իսկ ծառայողական առաջխաղացման ցուցակներում ընդգրկվելու խիստ պահանջներն ենթակա են վերանայման այն հաշվով, որ պայմանավորված լինեն առաջին հերթին **դատավորի աշխատանքի որակով**, այլ ոչ թե, օրինակ, աշխատանքային ստաժով. աշխատանքային ստաժը ոչ միշտ է վկայում աշխատանքի որակի մասին:

2. Ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի նախագահի պաշտոնը, ի տարբերություն վճռաբեկ դատարանի նախագահի պաշտոնի, նպատակահարմար է դարձնել **ժամկետային, որը կզբաղեցնեն նույն դատարանի դատավորները հաջորդաբար**, ինչը, մեր կարծիքով, կնպաստի դատարաններում «ենթակայության ու ստորադասության մթնոլորտի» վերացմանը, ինչպես նաև դատարանների նախագահների կողմից «արտոնյալ» կարգավիճակի վերացմանը: Ուստի, ՀՀ դատական օրենսգրքի 25-րդ հոդվածի առաջին մասն անհրաժեշտ է լրացնել նոր պարբերությամբ. **«Ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի նախագահի պաշտոնը յուրաքանչյուր երեք տարին մեկ հաջորդաբար զբաղեցնում են տվյալ դատարանի դատավորները:»** Իսկ նույն օրենսգրքի 125-րդ հոդվածի առաջին մասն անհրաժեշտ է շարադրել հետևյալ խմբագրությամբ. **«Ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի նախագահի թափուր պաշտոն առաջանալու դեպքում ՀՀ արդարադատության խորհուրդն առաջարկություն է ներկայացնում նույն դատարանի այն դատավորին, որի հերթն է զբաղեցնել տվյալ դատարանի նախագահի պաշտոնը՝ սույն օրենսգրքի 25-րդ հոդվածի առաջին մասով սահմանված կարգով: Հերթը որոշվում է դատավորի պաշտոնում աշխատելու առավել երկար ստաժի տևողությամբ, իսկ դրա անհնարինության դեպքում՝ տարիքի ավագությամբ: Առաջարկություն ստացած դատավորն իրավունք ունի հրաժարվել դատարանի նախագահի պաշտոնը զբաղեցնելուց: Այս դեպքում առաջարկությունը ներկայացվում է նույն դատարանի հաջորդ դատավորին՝ մինչև նրանցից մեկի համաձայնությունը, որից հետո Սահմանադրության 55-րդ հոդվածի 11-րդ կետով և սույն օրենսգրքով սահմանված կարգով տվյալ դատավորը Հանրապետության Նախագահի կողմից նշանակվում է ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի նախագահի պաշտոնում:»**

Ավելին, դատարանի նախագահի պաշտոնը զբաղեցնելու վերը նշված «ռոտացիոն» կարգը կարող է նախատեսվել նաև վարչական, վերաքննիչ դատարանների և վճռաբեկ դատարանի պալատների նախագահների պաշտոնները զբաղեցնելու դեպքում:

3. Գտնում ենք, որ ՀՀ դատական օրենսգրքի 3-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված ընդհանուր իրավասության դատարանների անվանումն անհրաժեշտ է համապատասխանեցնել ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածի պահանջներին և սահմանել՝ որպես **ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններ**, որոնք քննում են քաղաքացիական և քրեական բոլոր գործերը: Դա պայմանավորված է նաև նրանով, որ մասնագիտացված դատարանը պետք է մնա որպես **առաջին ատյանի մասնագիտացված դատարան**:

4. Մեր կարծիքով, ՀՀ դատական օրենսգրքի <<Դատավորի վարքագծի կանոնները>> վերտառությամբ 12-րդ գլխից առաջ նպատակահարմար է նախատեսել <<Դատավորի հիմնական իրավունքները և պարտականությունները>> վերտառությամբ

առանձին գլուխ, որտեղ համապարփակ կերպով կշարադրվեն դատավորի հիմնական իրավունքների, ազատությունների և պարտականությունների շրջանակը:

5. Ուշագրավ է նաև այն հարցադրումը, որ գործնականում այսօր առկա համապատասխան **դատարանների նախագահների կողմից գործերի ընդհանուր «մակագրության» արգելումն** էապես կնպաստի դատավորների անկախության ամրապնդմանը. «մակագրությունը» պետք է նախատեսվի միայն բացառիկ դեպքերում՝ կապված օբյեկտիվ պատճառների հետ /դատավորի արձակուրդ կամ գործուղում, թափուր տեղի առաջացում, ծանրաբեռնվածություն, առանձին գործերի միացում և այլն/: **Հիմնականում գործերը պետք է բաշխվեն միևնույն դատարանում՝ հիմք ընդունելով դատարանի կողմից սպասարկվող տարածքի ներքին վարչատարածքային բաժանումը /մեծամասամբ տվյալ մոտեցումը կիրառելի է ընդհանուր իրավասության և մասնագիտացված առաջին ատյանի դատարանների նկատմամբ/, որը կհաստատվի ՀՀ դատարանների նախագահների խորհրդի կամ ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահի որոշմամբ:** Առաջարկում ենք նախատեսել նաև **«ռոտացիոն» կարգ, որի ժամանակ դատավորի վարչական տարածքը նույն դատարանի շրջանակներում կփոխվի, օրինակ, երեք տարին մեկ անգամ:**

Այս կապակցությամբ վիճելի և քննարկման առարկա է ընդհանրապես դատարանների նախագահների ինստիտուտի առկա կարգավիճակը ՀՀ դատական համակարգում այն տեսանկյունից, որ յուրաքանչյուր դատավորն անկախ և ինքնուրույն է /ՀՀ Սահմանադրության 97-րդ հոդված, ՀՀ դատական օրենսգրքի 11-րդ հոդված/: այս սկզբունքը պետք է տարածվի ոչ միայն արդարադատության իրականացման ոլորտում, այլև ՀՀ դատական համակարգի և կոնկրետ դատարանի ներքին հարաբերություններում: Օրինակ՝ վերանայման առարկա են ՀՀ դատական օրենսգրքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 1-4-րդ կետերով նախատեսված գործառույթները /ընդհանուր իրավասության դատարանի նախագահն ապահովում է դատարանի բնականոն գործունեությունը, հետևում է դատավորների աշխատանքային կարգապահության պահպանմանը, հետևում է դատավորների կողմից գործի քննության ժամկետների պահպանմանը, գործի քննության ժամկետների խախտման վերաբերյալ իր եզրակացությունը ներկայացնում է Դատարանների նախագահների խորհրդի էթիկայի հանձնաժողով, դատավորի կողմից վարքագծի կանոնադրի պահանջների խախտում հայտնաբերելիս անհրաժեշտության դեպքում այդ մասին համապատասխան հաղորդում է ներկայացնում Դատարանների նախագահների խորհրդի էթիկայի հանձնաժողով: Փաստորեն, դատարանի նախագահն օժտված է նույն դատարանի դատավորների նկատմամբ <<հսկողական>> գործառույթներով, ինչը, մեր կարծիքով, անընդունելի է, քանի որ բոլոր դատավորների կարգավիճակը նույն ատյանի սահմաններում հավասար է և որևէ դատավոր չի կարող օրենքի ուժով հայտնվել «արտոնյալ» պայմաններում: Ինչ վերաբերում է ՀՀ դատական օրենսգրքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 5-9-րդ կետերով նախատեսված լիազորություններին, ապա այդ վարչական բնույթի հարցերը, կապված օբյեկտիվ պատճառներով գործերի բաշխման հետ, կարող են կանոնակարգվել օրենքով՝ մյուս դատավորների միջև գործերի ըստ հերթականության հավասար բաշխման սկզբունքով:

6. Գտնում ենք նաև, որ ՀՀ դատական համակարգում ուսումնասիրության առանձին առարկա պետք է դառնա կոնկրետ դատարանների ու դատավորների ծանրաբեռնվածության հիմնահարցը՝ համեմատելով այն մյուս դատարանների ու դատավորների հետ և նպատակ ունենալով դատավորների ու դատարանների թվակակազմը համապատասխանեցնել նրանց իրական ծանրաբեռնվածությանը: Մասնավորապես, ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններում քաղաքացիական գործեր քննող դատավորների թիվը պետք է գերազանցի քրեական գործեր քննող դատավորների թվին: Ինչ վերաբերում է վերաքննիչ դատարանների գործող 15+1 թվակազմին, ապա այն նույնպես ենթակա է վերանայման այն հաշվով, որ վերաքննիչ քաղաքացիական և վարչական դատարանների դատավորների թվաքանակն առանձին-առանձին պետք է զգալիորեն գերազանցի վերաքննիչ քրեական դատարանի դատավորների թվին:

Դեռ ավելին, ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններում առկա մասնագիտացումը /քրեական ու քաղաքացիական/ կարող է էլ ավելի մասնավորեցվել, ինչն էապես կնպաստի դատական ակտերի ընդհանուր որակի բարձրացմանը. օրինակ՝ *կորպորատիվ և աշխատանքային, ամուսնարձնատանեկան և ժառանգական, պայմանագրերից և վնաս պատճառելուց ծագող վեճեր, սնանկության և այլ գործերով մասնագիտացումներ*: Ինչ վերաբերում է քրեական գործերին, ապա դրանք պետք է մասնագիտացվեն համապատասխան **ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասի բաժինների**, այդ թվում՝ վերջիններիս ինստիտուցիոնալ միավորմամբ: Ըստ որում, մասնագիտացում կարող է ներմուծվել նաև վարչական դատարանում. օրինակ՝ *հարկային, մաքսային, իրավունքի գրանցման, վարչական ակտերի անվավեր կամ առոչինչ ճանաչման և այլ վեճերով մասնագիտացումներ կամ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի /այսուհետ նաև՝ ՎԴՕ/ 65-68-րդ հոդվածներով նախատեսված վիճարկման, պարտավորեցման, գործողության կատարման, ճանաչման հայցերով մասնագիտացումներ*:

7. Ինչ վերաբերում է «խառը» պահանջներին, որոնք ենթակա են տարբեր դատարանների քննությանը /օրինակ՝ վարչական և քաղաքացիական բնույթի պահանջներ/, ապա ՀՀ սահմանադրական դատարանի ու դատարանների նախագահների խորհրդի համապատասխան որոշումներով արդեն իսկ ամրագրվել և գործնականում սկսել է կիրառվել *հիմնական /առաջնային/ և ածանցյալ /հետևանքային/ պահանջների գաղափարը*, որն իր մասնակի լուծումն է ստացել նաև ՀՀ ՎԴՕ 70-րդ հոդվածում: Սակայն գտնում ենք, որ գործնականում հիմնական պահանջի ենթակայության կիրառմամբ դատավորները յուրովի են մեկնաբանում առաջնային և ածանցյալ պահանջները, ինչը առանձին դեպքերում չի համապատասխանում իրականությանը և անհարկի կոռուպցիոն ռիսկեր է պարունակում: *Տվյալ դեպքում կարևոր է օրենքի համապատասխան փոփոխությանը զուգահեռ ընդունել նաև ՀՀ դատավորների ընդհանուր ժողովի որոշում, որով մանրամասն կարգով կպարզաբանվեն նոր իրավական նորմերի կիրառումը: Բացի այդ, ածանցյալ պահանջների մասով համապատասխան դատարանը, ըստ էության լուծելիս վեճը, չպետք է մանրամասն անդրադառնա դրանց պատճառաբանությանը, քանի որ տվյալ դատավորը կարող է մասնագիտացված չլինել տվյալ վեճի բնագավառում, այլ իր դատական ակտում պարտավոր է հիմնավորել պահանջների հիմնական կամ ածանցյալ լինելու հանգամանքը /պատճառահետևանքային կապը/:*

8. Սույն հիմնահարցերի շրջանակում անհրաժեշտություն է առաջանում նաև անդրադառնալ դատավարական օրենքների մի շարք այլ բացթողումներին: **Այսպես, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի բազմաթիվ հղումները ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքին անհրաժեշտ է վերացնել**, իսկ ՀՀ քաղ.դատ.օր-քի այն ինստիտուտները, որոնք այսօր կիրառվում են վարչական դատավարությունում, անհրաժեշտ է նորովի վերախմբագրել ՀՀ վարչ.դատ.օր-քում: Դա կնպաստի ՀՀ վարչական դատավարության օրենսգրքից օգտվողների աշխատանքի հեշտացմանը և ամբողջական, ավտոնոմ կդարձնի ինքն օրենսգիրքը:

Իսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը նախատեսում է քրեական գործի շրջանակներում *միայն քաղաքացիական հայցի* ներկայացում, ինչը մեխանիկորեն չի ենթադրում **վարչական վարույթի հարուցում**: Անհրաժեշտ է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում նախատեսել նաև վերջինս՝ *վարչական հայցը*:

9. Գտնում ենք, որ ՀՀ դատական օրենսգրքում և դատավարական օրենսգրքերում անհրաժեշտ է հստակեցնել և կոնկրետացնել **ենթակայության ու ընդդատության ինստիտուտները և նրանց վերաբերող եզրույթները /տերմինները/**: Խոսքը վերաբերում է գործերի քննության ուղղահայաց և հորիզոնական բաշխմանը. մասնավորապես՝ ուղղահայացը վերաբերում է առանձին գործերով /վարչական, քաղաքացիական և քրեական/ դատավարական փուլերին, իսկ հորիզոնականը՝ միևնույն ատյանի դատարանների միջև գործերի ընդդատությանը:

10. Առանձնահատուկ ուշադրության է արժանի դատավարության փուլերի հիմնահարցը: Այսպես, ՀՀ-ում «եռաստիճան» դատական համակարգը, չհակասելով ՀՀ

Սահմանադրության 92-րդ հոդվածի պահանջներին, կարող է գործել հետևյալ սկզբունքով. գործող երկակի չափորոշիչները /ստանդարտները/ անհրաժեշտ է վերացնել, և բոլոր քաղաքացիական, վարչական ու քրեական գործերը կարող են բողոքարկվել դատավճռի կամ վճռի հրապարակումից հետո մեկամսյա ժամկետում անմիջապես ՀՀ վճռաբեկ դատարան: Վճռաբեկ բողոք կարող է բերել գործին մասնակցող ցանկացած անձ կամ այն անձը, որը չի մասնակցել դատավարությանը, սակայն դատական ակտն վերաբերում է վերջինիս իրավունքներին և պարտականություններին: Վճռաբեկ դատարանը պետք է իրականացնի ոչ թե լրիվ, այլ ոչ լրիվ վերաքննություն՝ դրանով իսկ բարձրացնելով առաջին ատյանների դերն ու նշանակությունը: Ընդհանրապես գործի քննության հիմնական ծանրաբեռնվածությունը պետք է ընկնի առաջին ատյանի դատարանի վրա, իսկ ՀՀ վճռաբեկ դատարանը պետք է միմիայն վճռաբեկ բողոքի սահմաններում քննության առնի դատական ակտի հիմնավորվածությունը և ոչ թե իրականացնի գործի նոր քննություն: Ըստ որում, վճռաբեկ բողոքը կարող է բերվել նյութական և/կամ դատավարական իրավունքի նորմերի խախտման կամ նոր երևան եկած հանգամանքների հիմքով /նոր հանգամանքներով գործերի վերանայման առանձին ինստիտուտն անհրաժեշտ է վերացնել և ընդգրկել նոր երևան եկած հանգամանքներին վերաբերող ինստիտուտի մեջ/:

Սեր կարծիքով, ՀՀ վճռաբեկ դատարանի պալատները պետք է ունենան **երեք դատավորներից բաղկացած կոլեգիալ կազմեր**, որոնք պետք է քննության առնեն վճռաբեկ բողոքն այն հաշվով, որ բոլոր դեպքերում կողմերը հնարավորություն ունենան ներկայացնելու իրենց դիրքորոշումը վերադաս ատյանում: Եռյակները պետք է ընդգրկված լինեն համապատասխան քաղաքացիական, վարչական և քրեական երեք պալատների կազմում. համապատասխան պալատը նույնպես պետք է օժտված լինի ամբողջ պալատի կազմով վճռաբեկ բողոքը քննության առնելու և համապատասխան որոշում կայացնելու իրավազորությամբ բազառապես այն դեպքում, երբ անհրաժեշտություն է առաջացել օրենքը կիրառել միատեսակ: ՀՀ վճռաբեկ դատարանի կոլեգիալ կազմի՝ եռյակի որոշումների հիմնավորումները՝ օրենքի միատեսակ կիրառելիության տեսանկյունից չեն կարող ունենալ պարտադիր նշանակություն ստորադաս դատարանների համար, սակայն ՀՀ վճռաբեկ դատարանի պալատի որոշման հիմնավորումները, այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները, օրենքի միատեսակ կիրառելիության տեսանկյունից պետք է ունենան պարտադիր նշանակություն բոլոր ստորադաս դատարանների համար: Ըստ որում, վճռաբեկ դատարանի համապատասխան պալատն ամբողջ կազմով կարող է քննության առնել վճռաբեկ բողոքը միայն այն դեպքում, երբ եռյակը հանգում է այն եզրակացության, որ տվյալ գործով կարող է ընդունվել ստորադաս դատարանի համար պարտադիր որոշում և գործը փոխանցում է պալատի քննությանը: Ավելին, ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահն իրավասու է նախագահել ցանկացած պալատի նիստին:

Ըստ ՀՀ դատական օրենսգրքի 51-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Վճռաբեկ դատարանի ակտերը ենթակա են պաշտոնական հրապարակման «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում»:

Գտնում ենք, որ «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում» ենթակա են պարտադիր հրապարակման միայն ՀՀ վճռաբեկ դատարանի պալատի բոլոր որոշումները, այդ թվում՝ վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին: Մինչդեռ, ներկայումս «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում» հրապարակվում են բազառապես ՀՀ վճռաբեկ դատարանի այն որոշումները, որոնցով վճռաբեկ բողոքներն ընդունվել են վարույթ. չեն հրապարակվում վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշումները, որոնք նույնպես հանդիսանում են ամբողջարկելի վերջնական ակտեր:

Ի վերջո, դատավարությունը պետք է հիմնականում ավարտվի ՀՀ վճռաբեկ դատարանի եռյակի կամ պալատի վերջնական որոշմամբ, որն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման: Ի դեպ, իրավակիրառ պրակտիկայում չափազանց արդիական ու կարևոր է այն հիմնահարգը,

որ ՀՀ վճռաբեկ դատարանի պալատը հնարավորություն ունենա հետազայում վերանայել ու փոփոխել նախկինում ամրագրված իր իսկ իրավական դիրքորոշումը:

Սակայն եթե եռյակը կամ պալատը բեկանում է դատական ակտը և գործն ուղարկում նոր քննության, ապա գործը բեկանված մասով ուղարկվում է ոչ թե բեկանված դատական ակտը կայացրած առաջին ատյանի դատարան, այլև **համապատասխան վերաքննիչ քաղաքացիական, վարչական կամ քրեական դատարան /նպատակահարմար է ստեղծել նաև վերաքննիչ վարչական դատարան/**, որը բեկանված մասով նորից քննությանն է առնում գործի փաստական հանգամանքները /բեկանված մասով իրականացնում է նոր քննություն առաջին ատյանի դատարանի համար նախատեսված գործի քննության հիմնական կանոններով/: *Տվյալ դեպքում վերաքննիչ դատարանը կաշկանդված չի լինի առաջին ատյանի դատարանի դիրքորոշմամբ, ինչը չի կարելի ասել առաջին ատյանի դատարանի կողմից /թեկուզև այլ կազմով/ կրկին անգամ նույն գործը քննելու մասին:*

*Վերաքննիչ դատարանը պարտավոր է հաշվի առնել ՀՀ վճռաբեկ դատարանի տվյալ գործով արտահայտած ցանկացած դիրքորոշումը և նրա դատավճիռը կամ վճիռը միայն մեկ անգամ կարող է բողոքարկվել ՀՀ վճռաբեկ դատարան՝ վերաքննիչ դատարանի կողմից թույլ տրված հնարավոր դատական սխալը շտկելու նպատակով:*

*Վերաքննիչ դատարանի կողմից կայացված դատավճիռը կամ վճիռը վճռաբեկության կարգով բողոքարկելուց հետո ՀՀ վճռաբեկ դատարանը չի կարող կրկին անգամ գործը ուղարկել նոր քննության:*

*Ինչ վերաբերում է առաջին ատյանի դատարանի միջանկյալ դատական ակտերին, ապա դրանք ստանալուց հետո հնգօրյա ժամկետում նույնպես պետք է բողոքարկվեն ՀՀ վճռաբեկ դատարան: Տվյալ բողոքի վերաբերյալ որոշում կարող է կայացնել միայն համապատասխան պալատի եռյակը՝ իր հայեցողությամբ բանավոր կամ գրավոր ընթացակարգով, գործը կամ գործի հավելվածն ստանալուց հետո 10-օրյա ժամկետում: Եռյակի որոշումները նույնպես օրինական ուժի մեջ են մտնում հրապարակման պահից, վերջնական են և ենթակա չեն բողոքարկման:*

11. Մեր կարծիքով, առանձին գլխով դատավարական օրենսգրքերում անհրաժեշտ է նախատեսել նաև դատավարության նոր փուլ, որը վերաբերում է ՀՀ մասնակցությամբ գործող միջազգային դատարան դիմելու իրավունքին և միջազգային դատարանի համապատասխան ակտերի ՀՀ-յան համար իրավական հետևանքներին. իհարկե, տվյալ փուլի որոշ մանրամասները կանոնակարգված են ՀՀ միջազգային պայմանագրերով և կանոնակարգերով, որոնց կրկնությունն ազգային օրենսդրությունում նպատակահարմար չէ:

12. Սույն հոդվածի շրջանակներում անհրաժեշտ է հատուկ անդրադառնալ նաև ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 3-րդ մասին, ըստ որի յուրաքանչյուր ոք իր գործի քննության ժամանակ որպես իրավական փաստարկ իրավունք ունի մատնանշելու նույնանման փաստական հանգամանքներով մեկ այլ գործով Հայաստանի Հանրապետության դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի հիմնավորումները (այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները): *Նախ՝ տվյալ իրավական նորմում օրենսդիրը չի նախատեսել նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի օրինական ուժի մեջ մտած դատական ակտը, որը, ի դեպ, ընդգրկված է եղել նույն դատական օրենսգրքի նախագծում և հետագայում հանվել վերջնական տեքստից: Այս նորմին համապատասխանում է նաև դատարանի պարտականությունը **հաշվի առնել ու գնահատել** կողմի մատնանշած դատական ակտի հիմնավորումները, իսկ օրինական ուժի մեջ մտած դատական ակտին գնահատական տալը, բացառությամբ օրենքով վերադաս դատական ատյանին վերապահված իրավասության, մեր կարծիքով, իրավաչափ պահանջ չէ և խարխլում է ողջ դատական համակարգի էությունը: Ի դեպ, պրակտիկայում տվյալ իրավական նորմն օբյեկտիվ և սուբյեկտիվ տարբեր պատճառներով այդպես էլ չի գտել իր լայն կիրառումը. դատավարության մասնակիցները հիմնականում վկայակոչում են ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումները՝ ղեկավարվելով ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասով:*

Սակայն հատկանշական է այն փաստը, որ ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով ՀՀ իրավական համակարգ է ներմուծվել անսահմանափակ դատական նախադեպի իրավունքը, ըստ որում՝ և՛ նյութական, և՛ դատավարական իրավունքների տեսանկյունից, ինչը, մեր կարծիքով, անընդունելի է:

Ըստ իրավունքի տեսությունում ընդունված տարբերակման՝ դատական նախադեպի իրավունքը հատկանշական է անգլոսաքսոնական իրավական համակարգ ունեցող /ընդհանուր իրավունքի/ երկրներին, իսկ Հայաստանը միջնադարից ի վեր (օրինակ՝ Մխիթար Գոշի և Սմբատ սպարապետի Դատաստանագրքերը և այլն) ընդունել է ռոմանագերմանական /մայրցամաքային/ իրավական համակարգի սկզբունքները:

Ըստ որում, նախադեպերը Անգլիայում ստեղծվում են միայն բարձրագույն դատական ատյանների՝ Լորդերի պալատի, Գաղտնի Խորհրդի դատական կոմիտեի (Համագործակցության անդամ-պետությունների գործերով), Վերաքննիչ և Բարձր դատարանների կողմից: Ցածրաստիճան դատարանները նախադեպեր չեն ստեղծում: Նախադեպի անգլիական կանոնն ասում է. **«Լուծել այնպես, ինչպես լուծվել է շուտ»**: Այն կրում է իմպերատիվ բնույթ, այսինքն՝ **յուրաքանչյուր դատական ատյան պարտավոր է հետևել վերադաս դատարանի կողմից ստեղծված, ինչպես նաև իր ստեղծած նախադեպերին**: Նախադեպի կանոնը պահանջում է անգլիական իրավաբանից նախկինում կայացված դատական որոշումների մանրակրկիտ վերլուծություն:

Սակայն նախադեպի կարծրացած կանոնից բացառություն, այնուամենայնիվ, գոյություն ունի: 1966թ. Լորդերի պալատը հրապարակել է հայտարարություն պրակտիկայի հարցերով, որտեղ թույլատրել է հնարավորություն անհրաժեշտության դեպքում հեռանալ ավելի վաղ իր կողմից ստեղծված նախադեպերից: Լորդերի պալատի իրավագործությունը՝ մերժել իր նախկին որոշումները, ամրագրվել է Պառլամենտի կողմից՝ 1966թ. «Արդարադատության իրականացման մասին» օրենքում:

Նախադեպի կանոնի մեջ որոշակի թուլացում է մտցվել նաև դատական ակտերի հրապարակումն ապահովող պայմանների կապակցությամբ: Հրապարակման ժամանակ կատարվում է որոշակի ընտրություն. հրապարակվում է Լորդերի պալատի որոշումների 75 տոկոսը, Վերաքննիչ դատարանի որոշումների 25 տոկոսը և Բարձր դատարանի որոշումների միայն 10 տոկոսը: Դրանով իսկ ասպարեզից հնարավոր է հանել այն դատական ակտերը, որոնք նպատակահարմար չէ ճանաչել նախադեպ: Ակտերի հսկայական ծավալը, որն ունակ է թուլացնել նախադեպի հեղինակությունը և խեղաթյուրել անգլիական դատավարությունը, դրանով իսկ փոքրանում է:

Անհրաժեշտ է նշել նաև, որ դատական նախադեպի ճանաչումը, որպես իրավունքի աղբյուր, տեղի է ունենում նաև անգլոսաքսոնական իրավական համակարգ կիրառող երկրներից դուրս, սակայն դրա հետ մեկտեղ այն չի հավակնում իրավունքի գլխավոր աղբյուրի դերակատարության ռոմանագերմանական /մայրցամաքային/ իրավական համակարգ կիրառող երկրներում: Օրինակ՝ Ֆրանսիայում միայն վճռաբեկ դատարանի որոշումներն են ճանաչվում որպես նախադեպային իրավունքի աղբյուր և կիրառվում են պրակտիկայում հիմնականում կոնկրետ իրավահարաբերությունը կարգավորող օրենքի բազակայության դեպքում:

Թեև ժամանակակից աշխարհում նկատվում են մերձեցման /ինտեգրացիոն/ պրոցեսներ ինչպես պետական և հասարակական կյանքի տարբեր բնագավառներում, այնպես էլ իրավունքի ասպարեզում, այնուամենայնիվ, ՀՀ իրավական համակարգ դատական նախադեպի իրավունքի ներմուծումը կարող է որակագրկել դատական ակտերի հիմնավորվածությունը, նպաստել անօրինական և չհիմնավորված դատական ակտերի վկայակոչմանն ու կիրառմանը, դատարանի անկախության, իր ներքին համոզմամբ գործելու սահմանափակմանը և բարդույթներ ստեղծել դատական նախադեպերի համակարգման ասպարեզում: *Ուստի, մեր կարծիքով, դեռ վաղաժամ է Հայաստանում կիրառել խառը իրավական համակարգ և ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի իրավադրույթն անհրաժեշտ է վերացնել*:

13. Համաձայն ՀՀ դատական օրենսգրքի 21-րդ հոդվածի 1-ին մասի՝ քրեական և վարչական գործերով դատարանը դատավճռի, վճռի կամ որոշման հետ միաժամանակ համապատասխան հիմքերի առկայության դեպքում պարտավոր է կայացնել լրացուցիչ

որոշում, որով պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի համապատասխան պաշտոնատար անձանց ուշադրությունն է հրավիրում դատական քննության ժամանակ ի հայտ եկած այն էական խախտումների վրա, որոնք թույլ են տրվել վարչական կամ քրեական գործով մինչդատական վարույթի ընթացքում:

*Փաստորեն, ՀՀ դատական օրենսգրքի 21-րդ հոդվածով Հայաստանում վերականգնվեց նախկինում գործող «մասնավոր որոշման» ինստիտուտը, որն արդեն կոչվեց «դատարանի լրացուցիչ որոշում»: Սակայն դատարանի լրացուցիչ որոշում կայացնելու իրավագործությունը, մեր կարծիքով, անհրաժեշտ է սահմանել ոչ թե որպես դատարանի պարտականություն, այլև **իրավունք**: Ավելին, լրացուցիչ որոշում կայացնելու իրավունքն անհրաժեշտ է վերապահել ոչ միայն քրեական և վարչական գործեր քննող դատարաններին, այլ նաև քաղաքացիական գործեր քննող դատարանին, քանի որ վերջինս դատաքննության ընթացքում նույնպես կարող է հայտնաբերել էական խախտումներ:*

14. Ըստ ՀՀ դատական օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին մասի՝ դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելու, նիստի բնականոն ընթացքին խոչընդոտելու, իրենց դատավարական իրավունքներից անբարեխղճորեն օգտվելու կամ դատավարական պարտականություններն անհարգելի չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում դատարանն իրավունք ունի դատավարության մասնակիցների, գործին մասնակցող անձանց և դատական նիստին ներկա գտնվող այլ անձանց նկատմամբ կիրառելու հետևյալ դատական սանկցիաները.

- 1) նախազգուշացում.
- 2) նիստերի դադարեցում.
- 3) դատական տուգանք.

4) դատախազին կամ փաստաբանին պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ դիմումով համապատասխանաբար գլխավոր դատախազին կամ Փաստաբանական պալատ դիմել:

*Այս առումով գտնում ենք, որ ՀՀ դատական օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված դատական սանկցիան ենթակա է վերացման, քանի որ պատասխանատվության ենթարկելու հարցում դատախազին և փաստաբանին դնում է «արտոնյալ» պայմաններում դատավարության այլ մասնակիցների հանդեպ: Դրանով խախտվում է կողմերի իրավահավասարության սկզբունքը /ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդված/: Բացի այդ, դատարանի դատախազին կամ փաստաբանին պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ դիմումը, ուղղված ՀՀ գլխավոր դատախազին կամ փաստաբանական պալատ, կարող է վերջիններիս կողմից չհանգեցնել որևէ իրավական հետևանքի: Այս դեպքում դատարանի կողմից արձանագրված խախտումը փաստացի մնում է անհետևանք, և խախտում թույլ տված դատախազը կամ փաստաբանը կարող է չենթարկվել պատասխանատվության:*

15. ՀՀ դատական օրենսգրքի 158-րդ հոդվածի 1-ին մասը դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցերը քննելիս արդարադատության խորհրդին հնարավորություն է ընձեռում գործել որպես դատարան, մինչդեռ, Սահմանադրության 91-րդ հոդվածի ուժով ՀՀ-ում արդարադատությունն իրականացնում են միայն դատարանները: Ավելին, նույն Սահմանադրության 95-րդ հոդվածը խորհրդի նման իրավագործություն չի նախատեսում, և արդարադատության խորհուրդը չի կարող իրականացնել արդարադատություն, ուստի ՀՀ դատական օրենսգրքի 158-րդ հոդվածի 1-ին մասի և այլ հոդվածների համապատասխան նորմերն անհրաժեշտ է վերախմբագրել:

Իսկ ՀՀ դատական օրենսգրքի 111-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին Արդարադատության խորհրդի որոշումները, ինչպես նաև դատավորին կալանավորելու, նրա լիազորությունները դադարեցնելու, նրան որպես մեղադրյալ ներգրավելու, դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու համաձայնություն տալու մասին Հանրապետության Նախագահին առաջարկ ներկայացնելու վերաբերյալ Արդարադատության խորհրդի որոշումները վերջնական են, ուժի մեջ են մտնում



Արդարադատության խորհրդի նիստում հրապարակման պահից և բողոքարկման ենթակա չեն: Այդ որոշումները ենթակա են հրապարակման «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում» և դատական իշխանության պաշտոնական ինտերնետային կայքում:

Այս կապակցությամբ ուշագրավ է այն փաստը, որ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքը չի պարունակում համանման դրույթ: Մեր կարծիքով, ՀՀ արդարադատության խորհուրդը, քննության առնելով դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը, կարող է հանդես գալ բացառապես վարչական մարմնի կարգավիճակում, որի որոշումները /վարչարարության արդյունքում ընդունվող վարչական ակտերը կամ անհատական իրավական ակտերը/ կարող են և պետք է ենթակա լինեն դատական կարգով բողոքարկման: Տվյալ մոտեցումը բխում է նաև Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի 2002 թվականի նոյեմբերի 19-ին Ստրասբուրգում ընդունված «Հատավորների պրոֆեսիոնալ վարքագիծը կարգավորող սկզբունքների և կանոնների մասին, մասնավորապես՝ էթիկայի նորմեր, պաշտոնի հետ անհամատեղելի վարքագիծ և անաչառություն» եզրակացության 77-րդ և այլ կետերի պահանջներից: Հետևաբար, վերը նշված և այլ իրավական նորմերում անհրաժեշտ է հստակեցնել ՀՀ արդարադատության խորհրդի որպես յուրահատուկ վարչական մարմնի կարգավիճակը, որը պարտադիր կերպով պետք է տարբերվի դատարանից, ինչպես նաև նրա կողմից ընդունվող որոշումների ոչ վերջնական լինելու, դատավորին իրազեկման հաջորդող օրվանից ուժի մեջ մտնելու և դատական կարգով բողոքարկման ենթակա լինելու հարցերը: Այս ամենը նույնպես էապես կնպաստի դատավորների անկախության իրական երաշխիքների ձևավորմանը:

Իր հերթին, ՀՀ դատական օրենսգրքի 153-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ դատավորին քրեական, վարչական, քաղաքացիաիրավական կամ օրենքով նախատեսված այլ պատասխանատվության ենթարկելը չի բացառում նրան կարգապահական պատասխանատվության ենթարկելու հնարավորությունը և հակառակը: Փաստորեն, օրենքը հնարավորություն է ընձեռում դատավորին միևնույն արարքի համար ենթարկել երկու տեսակի պատասխանատվության, ինչը, մեր կարծիքով, անընդունելի է: Առաջարկում ենք վերը նշված ՀՀ դատական օրենսգրքի 153-րդ հոդվածի 4-րդ մասը ճանաչել ուժը կորցրած:

Ի վերջո, այս կապակցությամբ չենք կարող չմատնանշել այն իրողությունը, որ ՀՀ դատական օրենսգրքի 155-րդ և մի շարք այլ իրավանորմերը խախտում են Սահմանադրության 5-րդ հոդվածով հռչակված օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման ու հավասարակշռման սկզբունքը և թույլ են տալիս գործադիր իշխանության ներկայացուցչին՝ արդարադատության նախարարին, կարգապահական վարույթ հարուցել դատական իշխանության ներկայացուցչի՝ դատավորի նկատմամբ:

16. Համաձայն ՀՀ Սահմանադրության 91-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետությունում արդարադատությունն իրականացնում են միայն դատարանները՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան: Ըստ նույն Սահմանադրության 97-րդ հոդվածի՝ արդարադատություն իրականացնելիս դատավորը և սահմանադրական դատարանի անդամն անկախ են, ենթարկվում են միայն Սահմանադրությանը և օրենքին: Այսինքն՝ դատավորն արդարադատություն իրականացնելիս պետք է ղեկավարվի և կիրառի բացառապես ՀՀ Սահմանադրության և օրենքների նորմերը: Ստացվում է, որ դատարանը չի կարող ղեկավարվել և կիրառել ենթաօրենսդրական ակտեր, այդ թվում՝ ՀՀ կառավարության և վարչապետի նորմատիվ բնույթ կրող որոշումներ:

Փաստորեն, վերը նշված սահմանադրական նորմերի ուժով դատարաններն իրականացնում են իրենց գլխավոր գործառույթը՝ արդարադատությունը, անկախ ՀՀ գործադիր իշխանության մարմինների ընդունած նորմատիվ իրավական ակտերի պահանջներից, որով ապահովվում է դատական իշխանության անկախությունը գործադիր իշխանությունից: